

եթէ այս պատմութիւնները հազորդոց և քրոպացիները յաւ ուսումնասիրած ըլլային նախնական մտայնութիւնը, երբեք չպիտի գարմանային:

Արդարեւ՝ նախնականներուն համար, և քրոպական բժշկութեան մանրակրկիտ ու երկարատես խնամքներն ու դարմանումները անհասկնալի են: Անոնց համար՝ հիւանդութիւնը մոզական հմայքի մը հետեւանքն է: Զայն կարելի է բուժել աւելի զօրաւոր մոզական հմայքով մը, որ կը կիրարկուի զեղին միջոցով: Հետեւարար անոր ազդեցութիւնը պէտք է անմիջական ըլլայ: Եւ այդպէս ալ կ'ըլլայ եթէ ձերմակ մարդը — բժիշկը — ուզէ, որովհետեւ ան խորհրդաւոր (միսթիք) շատ մեծ կարողութիւններ ունի: Բայց քանի որ ան չուզեր և փոխանակ անմիջապէս բուժելու, կ'երկարէ, կը խճողէ զարմաններն ու դարմանումները, նախնականն ալ, ոչ միայն երախտազէտ չըլլար, այլ մտահոգութիւն և կասկած կ'ունենայ ձերմակին այդ բնիկացիին հանդէպ: Իր արամարանութեամբ ձերմակ մարդն է որ պէտք է երախտապարտ ըլլայ իրեն, որ ինքզինքը ենթարկեր է խնամքներու և անհասկնալի ձեւակերպութիւններու, որոնք կրնան վատնուոր ալ ըլլալ: Արդարեւ նախնականին համար ամէն երեւոյթ խորհրդաւոր է և ինք չըջապատուած է խորհրդաւոր ուժերով որոնք կը պաշտպանեն զինք և իր ցեղը: Ընդունելով ձերմակին բժշկական խնամքները, անունգր, հագուստը, հաւանարար ան վշտացուցած է այդ ուժերը, և զրկուած՝ անոնց պաշտպանութենէն: Քանի որ ձերմակը զինք բժշկած է բայց զրկած է նաև իր խորհրդաւոր պաշտպաններէն, հետեւարար պարտաւոր է զստնայ իր ձերմակը, իր պաշտպանը, և հոգալ իր թէ՛ խորհրդաւոր և թէ՛ նիւթական պէտքերը...

Թրգմ. բժ. Լ. Գ.

Շ. ՊՂՈՆՏԷԼ

ՖՐԱՆՍԱԿԱՆ ԳԱՂՈՒԹԻՆ ՄԷՋ ԹՈՔԱԹՏԻՆ ԳԼՄ պայքարելու համար Նոյեմբեր 12ին գումարուած խորհրդակցական ժողովը որու մասին գրեցինք «Բուժանք»ի անցեալ թիւով, իր երկրորդ ժողովը գումարեց Գեկտ. 20ին՝ վիճարանութեան և նիւթարկուցաւ Թորախտոյն դէմ պայքարի զանազան միջոցներու մասին ճքթ. Գրիգորեանի և Քոյոյեանի կողմէ պատրաստուած և նախապէս բոլոր անդամներուն զրկուած ընդարձակ տեղեկագիրը: Երկար վիճարանութիւն, ներէ յետոյ, ժողովը ամբողջութեամբ ընդունեց այդ տեղեկագրին զանազան կէտերը և տուաւ որոշումներ, որոնց պիտի անդրադառնանք երբ սկսին գործադրութեան դրուել: